ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 24 » դեկտեմբեր 2018թ. No 3362 – Ա

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ ԿԻՐԱՌՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ փորձարարական եղանակով 15 օր տևողությամբ էլեկտրոնային դեղատոմսեր կիրառող կազմակերպությունների ցանկը՝ համաձայն Հավելվածի:
2. Բժշկական կազմակերպությունների ղեկավարներին (համաձայնությամբ)՝
   1) փորձաշրջանի ընթացքում իրականացնել էլեկտրոնային դեղատոմսերի ստեղծում՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի թեստային տարբերակում,
   2) զուգահեռաբար շարունակել թղթային էլեկտրոնային դեղատոմսերի դուրսգրումը:
3. Դեղատների տնօրեններին (համաձայնությամբ)՝
   փորձաշրջանի ընթացքում Էլեկտրոնային առողջապահության համակարգի թեստային տարբերակում բժշկական կազմակերպություններից դուրս գրված դեղատոմսերը էլեկտրոնային եղանակով ընդունել և կատարել նշումներ՝ դեղերի տրամադրման վերաբերյալ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Արսեն Դավթյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2018 **թ. դեկտեմբերի 24 - ի** N 3362 - **Ա հրամանի**

ՑԱՆԿ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ ԿԻՐԱՌՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	**Կազմակերպության անվանում**
1.	«Յունկտուռա» ԸԲԱՊ ՍՊԸ
2.	«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ
3.	Թիվ 12 պոլիկլինիկա ՓԲԸ
4.	Թիվ 4 պոլիկլինիկա ՓԲԸ
5.	«Բեգլարյան բժշկական կենտրոն» ՓԲԸ
6.	«Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի ներքոհիշյալ հասցեներում գործող թվով 5 դեղատուն՝ 1) ք.Երևան, Մամիկոնյանց 34ա, 2) ք.Երևան, Կոմիտաս 46, 3) ք.Երևան, Մամիկոնյանց 2, 86, 4) ք.Երևան, Ներսիսյան 6, 34, 5) ք.Երևան, Ազատության պողոտա, 10 շենք, 62 տարածք: